185. ***Ճարճակիս*** և ***Խոտավիտ*** գյուղերը Ապարանի գյուղերից են, այժմ չկան:

186. ***Տեղերը*** Աշտարակի շրջանի հին գյուղերից է:

187. ***Սանահին*** ասելով պատմիչը հասկանում է Սանահինի վանքը (Ալավերդու շրջանում), կառուցվել է 966 թվին:

188. ***Մարմաշենը*** վանքային համալիր է, որ գտնվում է Շիրակում, Ախուրյանի աջ ափին, Վահրամաբերդ գյուղի մոտերքը: Կառուցվել է 988-1029 թվերին:

189. ***Արուճը*** Թալիշն է Թալինի շրջանում:

190. ***Հառիճա վանքը*** գտնվում է Արթիկի շրջանի Հառիճ գյուղում, մինչև 1946 թիվը գյուղը կոչվել է Ղփչաղ: Վանքը կառուցվել է 7-րդ դարում, իսկ գլխավոր եկեղեցին 12-13-րդ դարերի կառույց է:

191. ***Ուշին*** Աշտարակի շրջանի գյուղերից է՝ Աշտարակից հյուսիս:

192. ***Սաղմոսավանքը*** Աշտարակի շրջանի վանքերից է, գտնվում է Ախուրյանի աջ ափին, Աշտարակ քաղաքից հյուսիս՝ 12 կմ հեռավորության վրա: Հիմնական եկեղեցին Ս. Սիոնն է, կառուցվել է 13-րդ դարում:

193. ***Մուղնին*** Աշտարակի շրջանի գյուղերից է: Հայտնի է Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցին, կառուցվել է 14-րդ դարում, վերակառուցվել է 1664-69 թվերին:

194. ***Գամիրքը*** Կապադովկիայի հնագույն անունն է, գտնվում է Փոքր Ասիայի կենտրոնական մասում: Կենտրոնը Կեսարիա քաղաքն է:

195. ***Ղզղալան*** Կոտայքի շրջանի գյուղերից է, Աբովյան քաղաքից արևելք՝ 20 կմ հեռավորությամբ: Այժմ խոտհարքային վայր է և պատկանում է Կոտայք (Երկավան, Ելկավան) գյուղին:



# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Աբեղյան Մ**. Հայոց հին գրականության պատմ., գիրք 1-ին, Եր., 1944 թ.:

2. **Աբեղյան Մ**., Հայոց հին գրականության պատմ., գիրք 2-րդ, Եր., 1946 թ.:

3. **Ալիշան Ղ**., Այրարատ, Վենետիկ, 1891:

4. **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893:

5. **Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901:

6. **Աճառյան Հ**., Հայոց անձնանունների բառարան, հ.1-5, Եր., 1942-62:

7. **Առաքել Դավրիժեցի**, Պատմ., Առաքել վարդապետի Դավրիժցվո, Վաղարշ. 1889:

8. **Առաքելյան Վարագ**, «Առաքել Դավրիժեցի», Պատմ. բանաս. հանդես, 1970, Թիվ3

9. Դիվան հայ վիմագրության, պրակներ, Երևան, 1960-1977

10. **Դուրյան Ե.**,Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչեւ մեր օրերն, Կ. Պոլիս, 1885:

11. **Երեմյան Ս**., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:

12. **Զամինյան Ա**., Հայ գրականության պատմություն, Ն. Նախիջևան, 1914:

13. **Զարբհանալեան Գ**., Պատմութիւն հայերէն դպրութեան, Վենետիկ, 1905:

14. **Զաքարիա Սարկավագի** պատմ. Հ. Ա-Գ, Վաղարշապատ, 1870:

15. **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1-ին, 2-րդ, Վենետիկ, 1902-1907:

16. **Թորոսյան Հ.**, Histoire de la litterature armeninne des orgines jusqua nos jours, Paris, 1951:

16. **Լեո,** Հայկական տպագրություն, հ. Ա, Թիֆլիս, 1901:

17. **Լեո,** Հայոց Պատմ., հ. Գ, Երևան, 1942:

18. **Հակոբյան Վ.**, Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. Ա, Եր., 1951:

19. **Ղազիկյան Ա.,** Հայկական նոր մատենագիտ., հ.Ա, Վենետիկ, 1909:

20.**Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948:

21. **Մարտիրոսյան Ա.**, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958:

22. **Միրզոյան Հ**., Առաքել Դավրիժեցու առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, թ. 2:

23. **Շահխաթունյան Հ**., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 1-2, Էջմիածին, 1842:

24. **Չամչեան Մ.,** Պատմ. հայոց, հ. Ա, Վենետիկ 1784:

25. **Պոտուրեան Մ**., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938: